ԵՐԵԽԱՆԵՐԸ ԵՒ ՍԵԴԻԱՆ

ՁԵՌՆԱՐԿ ԾՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԽՆԱՄԱԿԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԵՐԵԽԱՆԵՐԸ ԵՎ ՄԵԴԻԱՆ

ՁԵՌՆԱՐԿ ԾՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԽՆԱՄԱԿԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Co-financed by the European Union
Connecting Europe Faculty

KANSALLINEN AUDIOVISUAALINEN INSTITUUTTI
NATIONELLA AUDIOVISUELLA INSTITUTET
NATIONAL AUDIOVISUAL INSTITUTE

ՏԵՔՍՏԸ՝ Աուդիովիզուալ ազգային ինստիտուտի՝ մեդիակրթության և աուդիովիզուալ մեդիայի բաժնի փորձագետների (MEKU)

Աուդիովիզուալ ազգային ինստիտուտի հրատարակություն, 2017թ.

ISSN 2342-5970, ISBN 978-952-68501-3-9 (nid.),
ISBN 978-952-68501-4-6 (PDF),
ISBN 978-952-68501-5-3 (EPUB)

Սույն հրատարակության պատասխանատվությունը բացառապես հեղինակինն է: Եվրոպական միությունը պատասխանատվություն չի կրում ձեռնարկում ներառված տեղեկությունների որևէ նպատակով գործածման համար:

ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝
Աուդիովիզուալ ազգային ինստիտուտ,
մեդիակրթության և աուդիովիզուալ
մեդիայի բաժին (MEKU),
Sörnäisten rantatie 25 A / PB 16, 00501, Հելսինկի,
ՖԻՆԼԱՆԴԻԱ
kavi.fi/meku

Անգլերեն այլ հրատարակություններ հասանելի են հետևյալ հասցեով՝
kavi.fi/en/meku/publications

Սույն ուսումնամեթոդական ձեռնարկը թարգմանվել է Հանրային լրագրության ակումբի «Ավելի անվտանգ առցանց միջավայր. նախադպրոցական հաստատություններում մեդիագրագիտության ուղղությամբ միջամտություն» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվել է ԱՄՆ պետքարտուղարության Հասարակայնության հետ կապերի գրասենյակի դրամաշնորհի շրջանակներում:

Այս ուսումնամեթոդական ձեռնարկում արտահայտված է հեղինակի դիրքորոշումը, որի համընկնումը ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշման հետ պարտադիր չէ:

ՀԼԱ PJC
ՀԱՆՐԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲ
PUBLIC JOURNALISM CLUB

The U.S. Embassy in Armenia

Նկարազարդումը՝ Լուսինե Խանդիլյանի
Էջադրումը՝ Ծովինար Խաչատրյանի

Բովանդակություն

Ընտանիքը՝ մեդիայի փոփոխվող աշխարհում 4

Առաջին քայլերը մեդիայի հետ..... 6

Տարիքային սահմանափակումները կախված են
բովանդակության վնասակարությունից 8

Արդյո՞ք ճիշտ է 11

Մեդիա, ուսուցում և ժամանց 12

Մասնակցեք և փոփոխություն բերեք հենց սկզբից.....14

Ինչպե՞ս անցավ օրդ 15

Սոցիալական մեդիան միավորումէ մարդկանց 18

Ի՞նչ է քննադատական մեդիագրագիտությունը 20

ԱՐԴՅՈ՞Ք ԳԻՏԵԻՔ 20

ԱՐԴՅՈ՞Ք ԳԻՏԵԻՔ 21

Գաղտնիություն և տեղեկատվության անվտանգություն 22

Ընտանիքը՝ մեդիայի փոփոխվող աշխարհում

Այսօր մեդիան տեղեկություն ստանալու, սովորելու, մարդկանց հետ շփվելու, ժամանցի և զվարճանքի բազմատեսակ հնարավորություններից օգտվելու լավագույն միջոցն է: Մենք ապրում ենք այնպիսի մեդիամշակույթի պայմաններում, երբ տեղեկությունը տարածվում է արագ, և ամեն րոպե ծնվում ու անհետանում են նոր երևույթներ: Մեդիան մեծ դեր ունի նաև երեխաների կյանքում: Մեդիայի հետ կապված՝ երեխաների դաստիարակությունն առաջին հերթին պահանջում է ներկայություն՝ հետաքրքրության ցուցաբերում երեխայի կյանքի նկատմամբ և մեդիային առնչվող հարցեր քննարկելու պատրաստակամություն և կարողություն:

Թեպետ մեդիամշակույթը ենթարկվում է փոփոխությունների, երեխաներին մեծացնելու և կրթելու միջոցները հիմնականում մնում են նույնը: Երեխաներ ունեցող ընտանիքներում մեծահասակները պարտադիր չէ, որ լինեն փորձագետներ երեխաներին հետաքրքրող բոլոր մեդիաերևույթների հարցում: Ինչ վերաբերում է մեդիային, երեխաների դաստիարակությունն առաջին հերթին պահանջում է ծնողների ներկայություն, հետաքրքրության ցուցաբերում երեխայի կյանքին և մեդիային առնչվող հարցեր քննարկելու պատրաստակամություն ու կարողություն:

Վերջին քսան տարիներին հատկապես համացանցը մեծապես ազդել է աշխարհում կատարվող փոփոխությունների վրա: Օրինակ՝ սոցիալական մեդիան, էլեկտրոնային փոստը, թվային խաղերն ու սմարթֆոնները նշանակալիորեն փոխել են մեր մոտեցումները՝ սոցիալական շփման, ազատ ժամանակի և աշխատելու ձևերի շուրջ: Համացանցի շնորհիվ աշխարհը փոքրացել է. նորությունները, նոր հայտ-նագործությունները և հեռախոսային հավելվածները աշխարհի բոլոր անկյուններում հասանելի են դառնում գրեթե ակնթարթորեն: Համացանցից օգտվելու վերաբերյալ բազմաթիվ կարևոր հարցեր են տեղ գտել սույն ձեռնարկում:

«Երեխաները և մեդիան» ձեռնարկը հակիրճ ակնարկ է մեդիայի՝ որպես ընտանեկան առօրյայի մի մասի վերաբերյալ, այն ուսումնասիրում է երեխաների կողմից օգտագործվող մեդիաբովանդակությունը և դրա նշանակությունն առօրյայում: Բացի այդ՝ ձեռնարկը ներառում է օգտակար խորհուրդներ այն մասին, թե ինչպես քննարկել մեդիայի օգտագործումը ձեր ընտանիքում և գտնել դրա կիրառման ամենաարդյունավետ ճանապարհները:

Ինչ վերաբերում է մեդիային, երեխաների դաստիարակությունն առաջին հերթին պահանջում է ծնողների ներկայություն, հետաքրքրության ցուցաբերում երեխայի կյանքին և մեդիային առնչվող հարցեր քննարկելու պատրաստակամություն ու կարողություն:

Ոչ միայն հեռախոս, այլև ֆոտոխցիկ, համակարգիչ, խաղարկիչ, նվագարկիչ և տեսախցիկ:

Ի՞նչ է մեդիան

Մեդիաալիքների թվին են պատկանում ավանդական զանգվածային լրատվամիջոցները, ինչպիսիք են թերթերը, ամսագրերը, հեռուստատեսությունը և ռադիոն: Ի թիվս այլ սարքավորումների՝ ժամանակակից մեդիագործիքներ են համարվում նաև նվագարկիչները, ֆոտոխցիկները, խաղարկիչները, պլանշետները, էլեկտրոնային գրքերը, համակարգիչները և սմարթֆոնները:

Մեդիագործիքների միջոցով պատրաստվող, օգտագործվող և փոխանցվող բոլոր ուղերձները անվանում ենք մեդիա բովանդակություն: Սրա օրինակներ են տեքստային հաղորդագրությունները, ֆիլմերը, լուսանկարները, էլեկտրոնային գրքերը, հեռուստատեսային և ռադիո ծրագրերը, խաղերը, տարբեր ֆորումներում հաղորդագրությունները, լուրերը, բլոգային գրառումները և տեսանյութերը:

Գործիքներից և բովանդակությունից զատ՝ «մեդիա» բառը կարող է կիրառվել նաև որոշակի ոլորտի մասին խոսելիս, ինչպիսիք են, օրինակ, լրատվամիջոցները կամ ամսագրերի խմբագրությունները:

Այսօր մեդիայի տարբեր տեսակները և բովանդակությունները համատեղ են կիրառվում: Օրինակ՝ ամսագրի առցանց տարբերակը գրավոր և խմբագրված տեքստից բացի կարող է նաև ներառել լուսանկարներ, տեսանյութեր, ձայնագրություններ և ընթերցողների մեկնաբանություններ: Հետևաբար շատ կարևոր է իմանալ, թե ինչպես պետք է փնտրել և կարդալ տեղեկություններ և հաղորդագրություններ տարբեր ձևաչափերում: Սմարթֆոնը, հավանաբար, մեդիայի տարբեր ձևաչափերի և բովանդակությունների լավագույն համադրությունն է: Այն օգտագործվում է որպես հեռախոս, համակարգիչ, խաղարկիչ, նվագարկիչ, ֆոտո- և տեսախցիկ:

Առաջին քայլերը մեդիայի հետ

Ֆինլանդիայում բոլոր երեխաները ծնվում են՝ շրջապատված մեդիա մշակույթով: Երեխաներին տրամադրվող մայրության փաթեթը ներառում է մեդիա՝ պատկերազարդ գրքի տեսքով: Տանը գործածվող մեդիա գործիքները և բովանդակությունները երեխայի միջավայրի մաս են կազմում, երբ նրանք սկսում են ներգրավվել ընտանիքի առօրյայում:

Զուտ զարգացման տեսանկյունից փոքր երեխային մեդիա անհրաժեշտ չէ: Սակայն, երեխաները, սովորաբար, սիրում են դիտել մանկական հեռուստատեսային ծրագրեր, խաղեր և այլ մեդիաբովանդակություն: Այս պարագայում արդեն մեծահասակների պատասխանատվությունն է որոշել, թե ինչն է հարմար ընտանիքի փոքրերի համար:

Մեծահասակները ուղղորդում են

Այլ մարդկանց հետ շփվելով՝ երեխաները զարգանում են: Դեմ առ դեմ շփման միջոցով տեղի ունեցող խոսքի զարգացումը կամ հույզերի կառավարումը չեն կարող փոխարինվել մեդիագործիքով: Օրինակ՝ մեդիան երբեք չպետք է լինի բարկացած երեխային հանգստացնելու հիմնական միջոցը: Ավելին՝ երեխաները չպետք է երկար ժամանակ մենակ մնան մեդիայի հետ: Նրանք սովորաբար ցանկանում են մեդիայից օգտվել ընտանիքի հետ միասին:

Ինչքան փոքր է երեխան, այնքան ավելի կարճատև, ավելի հասկանալի և հանգիստ պետք է լինի մեդիափորձառությունը: Նորածիններն ու մանկահասակ երեխաները հատկապես պետք է պաշտպանված լինեն մեդիայի շարունակական հոսքից և մեդիափորձառությունից, որոնք կարող են չափից լարված լինել նրանց տարիքի համար:

Մանկահասակ երեխաների աճին զուգընթաց զարգանում է բարդացված սյուժեով պատմություններ հասկանալու նրանց ունակությունը: Վառ երևակայությունը մեծացնում է հեքիաթների և արկածների նկատմամբ հետաքրքրությունը: Փաստը հորինվածքից տարբերելու ունակությունը զարգանում է, երբ երեխաները հասնում են դպրոցական տարիքին: Սակայն այս տարիքում նույնպես երեխաներն ունեն իրենց ընտանիքների հետ խաղաղ միջավայրում լինելու, ինչպես նաև քնի, մարզանքի, շարժվելու և խաղալու կարիք:

Մեդիայի տարբեր հերոսների և պատմությունների հետ իրենց նույնացնելու միջոցով երեխաները կարող են տարբեր հույզեր ունենալ, զգալ իրենց տարբեր հերոսների դերերում ու տարբեր իրավիճակներում և խորհել այն մասին, թե ինչն է ճիշտ, և ինչը՝ սխալ:

Մեդիան այսօրվա երեխաների մշակույթում

Մեծահասակները պետք է հիշեն, որ մեդիան կենտրոնական դեր ունի երեխաների մշակույթում այսօր: Մեդիայի տարբեր հերոսների և պատմությունների հետ իրենց նույնացնելու միջոցով երեխաները կարող են տարբեր հույզեր ունենալ, զգալ իրենց տարբեր հերոսների դերերում ու տարբեր իրավիճակներում և խորհել այն մասին, թե ինչն է ճիշտ, և ինչը՝ սխալ: Մեդիան կարող է կարևոր թեմա դառնալ այլ երեխաների հետ խաղերի և խոսելու ժամանակ: Այն երեխաներին ոգեշնչում է նկարել, երգել և ինքնարտահայտվել այլ եղանակներով: Այս առումով մեդիայի պատմությունները և հերոսները «միայն հեքիաթ» չեն, այլ հսկայական դեր ունեն երեխաների կյանքում:

ԶՐՈՒՅՑԻ ԹԵՄԱՆԵՐ ՁԵՐ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՄԱՐ

- Ի՞նչ իրավիճակներում եք օգտվում մեդիայից:
  Ո՞ւմ հետ են ձեր ընտանիքի փոքրիկները օգտվում մեդիայից:
- Պարբերաբար իրականացվող գործողությունները և հստակ կանոնները երեխայի համար ստեղծում են ապահովության զգացողություն և հաճախ կանխում են անցանկալի ընտանեկան վեճերը: Ձեր ընտանիքը սահմանե՞լ է հստակ կանոններ, թե երբ է մեդիան թույլատրված, երբ՝ ոչ:
- Ինչպե՞ս է ձեր ընտանիքն ապահովում, որ տան մեդիա միջավայրը հարմար լինի ընտանիքի ամենափոքր անդամների համար:

Տարիքային սահմանափակումները կախված են բովանդակության վնասակարությունից

Հեռուստատեսային ծրագրերի, ֆիլմերի և թվային խաղերի համար սահմանված տարիքային սահմանափակումները նշանակում են, որ դրանց բովանդակությունը կարող է վնասակար լինել ձեր երեխայի զարգացման համար: Այդ սահմանափակումները որոշակի տարիքի երեխայի համար սոսկ խորհուրդներ չեն, ոչ էլ նշանակում են, թե որ տարիքային խմբի համար է այդ աուդիովիզուալ ծրագիրը նախատեսված: Տարիքային սահմանափակումները հիմնված են «Աուդիովիզուալ ծրագրերի մասին» ֆիննական ակտի վրա (Kuvaohjelmalaki, 710/2011), որի նպատակը երեխաների պաշտպանությունն է:

Ֆինլանդիայում տարածվող բոլոր ֆիլմերը, հեռուստատեսային ծրագրերը և թվային խաղերը պետք է կրեն տարիքային սահմանափակումների մասին ցուցումներ, որոնք կնշեն, թե ինչ վնասակար բովանդակության պատճառով է սահմանվում տվյալ սահմանափակումը: Այդ նշանները տեղադրվում են այնպիսի բովանդակության համար, որը կարող է սթրես առաջացնել, բռնության տեսարան կամ սեռական բովանդակություն կամ թմրանյութերի գործածման նկարագրություն պարունակել: Տարիքային սահմանափակումները պարտադիր իրավական ուժ ունեն, ինչը նշանակում է, որ աուդիովիզուալ ծրագրերը չեն կարող հանրորեն ցուցադրվել, վարձակալությամբ տրվել կամ վաճառվել նշված տարիքից ցածր անձանց:

Տարիքային սահմանափակումները հիմնված են «Աուդիովիզուալ ծրագրերի մասին» ֆիննական ակտի վրա, որի նպատակը երեխաների պաշտպանությունն է:

Տարիքային սահմանափակումներն օգնում են անվտանգ մեդիաբովանդակություն ընտրելու հարցում

Երեխաների աճի հետ զարգանում է ուժեղ ներգործություն ունեցող մեդիաբովանդակությունը հասկանալու և մշակելու կարողությունը: Երեխայի տարիքի և զարգացման մակարդակի համար վնասակար բովանդակությունը կարող է առաջացնել, օրինակ, քնի խանգարումներ կամ անհանգստություն:

Երեխայի զարգացման մակարդակը և տարբեր բովանդակությունների նկատմամբ զգայունությունը խիստ անհատական են: Այդ պատճառով տարիքային սահմանափակումները ճկուն են, և նշված տարիքային սահմանափակման տարիքից երեք տարի փոքր երեխան կարող է դիտել հրապարակավ ցուցադրվող աուդիովիզուալ ծրագիր ծանոթ մեծահասակի ներկայությամբ: Այս ճկունությունը չի ընդգրկում 18 տարեկանի սահմանափակումը: Որպես խնամակալ՝ դուք ամենալավը գիտեք Ձեր երեխային և կարող եք վերահսկել նրա կողմից մեդիայի օգտագործումը:

Ի՞նչ կասեք համացանցի և սմարթֆոնների մասին

Տարիքային սահմանափակումներ սահմանված չեն բոլոր առցանց բովանդակությունների և սմարթֆոնների հավելվածների համար այնպես, ինչպես ֆիլմերի և խաղերի համար: Բացի այդ՝ Ֆինլանդիայից դուրս գործող ծրագրային ծառայությունները չեն ենթարկվում Ֆինլանդիայի տարիքային սահմանափակումների կանոնակարգերին: Որքան

Որքան լավ գիտեք ձեր երեխայի կողմից օգտագործվող ծառայությունները, այնքան լավ կարող եք գնահատել, արդյո՞ք դրանք հարմար են ձեր երեխայի համար:



լավ գիտեք ձեր երեխայի կողմից օգտագործվող ծառայությունները, այնքան լավ կարող եք գնահատել՝ արդյո՞ք դրանք հարմար են ձեր երեխայի համար: Երեխաների համար նախատեսված շատ կայքեր պարունակում են տեղեկատվական փաթեթ մեծահասակների և մանկավարժների համար, որն արժե կարդալ:

ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԱՌԱՋ ՔԱՇՎՈՂ ՀԱՐՑԵՐ

- **Նկատե՞լ եք տարիքային սահմանափակումներ կինոնկարների, հեռուստածրագրերի կամ խաղերի համար:**
- **Գիտե՞ք, որ տարիքային սահմանափակումը չի նշում այն տարիքը, երբ երեխաները կարող են խաղալ կամ դիտել բովանդակությունը, այլ ավելի շուտ նշում է, որ բովանդակությունը կարող է վնասակար լինել երեխաների համար:**

ԱՐԴՅՈ՞Ք ԳԻՏԵԻՔ

S և **T** նշանները նշանակումեն, որ աուդիովիզուալ ծրագիրը չի պարունակում սեռական կամ բռնություն պարունակող բովանդակություն, թմրամիջոցների օգտագործման նկարագրություն կամ երեխաների մեջ անհանգստություն առաջացնող բովանդակություն: Այնուամենայնիվ, **S** կամ **T** նշաններով նշված բովանդակությունը պարտադիր չէ, որ երեխաների համար նախատեսված լինի, հնարավոր է, որ այն նախատեսված լինի նաև մեծահասակների լսարանի համար:

Արդյո՞ք ճիշտ է

Երեխաներն իրավունք ունեն արտահայտվելու և տեղեկություն ստանալու բազմաթիվ աղբյուրներից: Նրանք չպետք է սահմանափակվեն միայն երեխաների համար նախատեսված մեդիայով: Քանի որ մեդիայի բովանդակության գերակշիռ մասը երիտասարդների և մեծահասակների համար է, դրանց պիտանիությունը երեխաների համար կարող է երբեմն կասկածելի լինել:

Մեր ընտանեկան կանոնները

Մեդիայի միջոցով երեխաները կարող են նաև բախվել ատելության խոսքի, սեռական պատկերների կամ սարսափելի լուրերի: Երեխաները կարող են նաև լսել և սովորել հայհոյանքներ կամ երկիմաստություններ, որոնք հնարավոր է ամբողջովին չընկալեն:

Մեդիաբովանդակության մեծ մասը չի համապատասխանեցվում ըստ տարիքային սահմանափակումների, և երեխաներին դա դիտել թույլ տալը կամ թույլ չտալը ծնողների լուծելիք հարցն է: Ընտանիքները տարբեր կարծիքներ ունեն, թե ինչն է պիտանի երեխաների համար:

Ընտանիքները տարբեր կարծիքներ ունեն, թե ինչն է պիտանի երեխաների համար: Անհրաժեշտ է քննարկել մեդիայի օգտագործման լավ տարբերակները, և թե որն է ավելի հարմար երեխաների համար:

Անհրաժեշտ է քննարկել մեդիայի օգտագործման լավ տարբերակները, և թե որն է ավելի հարմար երեխաների համար: Սա նաև երեխաների դաստիարակության կարևոր մաս է՝ մաքրել մեդիայից վերցրած խեղկատակությունները, ինչպես օրինակ՝ վնասակար մեդիա բովանդակության քննարկումը :

ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԱՌԱՋ ՔԱՇՎՈՂ ՀԱՐՑԵՐ

- Ի՞նչ պետք է անել, երբ տհաճ, վախեցնող կամ անհանգստացնող բան եք տեսնում:
  1. Անջատել մեդիա սարքավորումները, որոնց վրա տեսել եք վախեցնող բաները:
  2. Պատմել այդ մասին մեծահասակին: Եկեք միասին զրուցենք այդ մասին և մտածենք, թե ինչ պետք է անենք դրա վերաբերյալ:
- Ո՞ւմ խորհուրդ կտաք ձեր նախընտրած շոուն կամ կայքը: Ինչո՞ւ:



Մեդիա, ուսուցում և ժամանց

Մեդիան կարող է օգտագործվել տարբեր նպատակներով՝ ուսմանն օժանդակելու և ժամանց կազմակերպելու համար: Բացի դպրոցական և նախադպրոցական կրթությունից՝ մեդիան նաև օգնում է մեզ սովորելու ազատ ժամանակ: Սովորե՛ք մեդիան օգտագործել, օրինակ, միասին տեղեկություն որոնելով: Մեդիայի օգնությամբ կարող եք գտնել հետաքրքիր թեմաների վերաբերյալ խորհուրդներ և ուսուցողական նյութեր, տեղեկություններ ձեր երեխաների սիրելի հայտնի մարդկանց մասին, կամ որոնել դասացուցակը, կամ ստուգել ֆուտբոլային խաղերի հաշիվները: Շատ երեխաներ տարբեր մեդիաներում գտնում են իրենց հետաքրքրող թեմաներով նյութեր:

Մեդիան օգնում է ժամանցը կազմակերպելուն

Մեդիան ինքնին կարող է լինել հոբբի, քանի որ այն մեզ հնարավորություն է տալիս, օրինակ, նվագելու, կարդալու, երաժշտություն լսելու և դիտելու ու պատրաստելու ֆիլմեր: Ավելին՝ համացանցը հիանալի տեղ է նույն հետաքրքրություններով այլ անձանց հանդիպելու համար:

Երեխաները ստեղծում են զվարճանքի համար տարբեր մեդիամիջոցներ: Տեսախցիկներն ու խմբագրման ծրագրակազմերը նախկինում քիչ էին հանդիպում և թանկ էին, բայց այժմ տարրական դասարանների գրեթե բոլոր աշակերտներն գրպաններում ունեն նկարահանման և ձայնագրման գործառույթներով սմարթֆոններ: Սարքերը սովորաբար այնքան հեշտ է օգտագործել, որ ընտանիքի նույնիսկ ամենափոքր անդամները գիտեն, թե ինչպես որոնել իրենց հետաքրքրող տվյալները կամ ռատկերները:

ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԱՌԱՋ ՔԱՇՎՈՂ ՀԱՐՑԵՐ

- Ձեր երեխան գիտի՞, թե՝ ինչպես տեղեկատվություն որոնել համացանցում: Իմացե՛ք, թե ինչպես են որոնիչները աշխատում միասին:
- Ձեր ընտանիքը օգտվո՞ւմ է մեդիագործողություններից, օրինակ՝ ֆիլմեր դիտել, խաղեր խաղալ, լուսանկարել, բլոգներ վարել և այլն:
- Ի՞նչն է հոբբին հետաքրքիր դարձնում: Կա՞ մի բան, որ ձեր երեխան կցանկանա իմանալ իր հոբբիի մասին: Ի՞նչ կարող է ձեր երեխան սովորեցնել ընտանիքի մնացած անդամներին հոբբիի մասին:
- Որտե՞ղ կարող եք հանդիպել նույն հոբբիով հետաքրքրող այլ անձանց: Արդյո՞ք կան համացանցային ֆորումներ կամ իրական ակումբներ նույն հոբբիով հետաքրքրվող մարդկանց համար:

Մասնակցե՛ք և
փոփոխությո՛ւն
բերեք հենց սկզբից

Մեդիան մասնակցելու և ազդեցություն ունենալու հարցում բազմաթիվ հնարավորություններ է ընձեռում:

Ակտիվ քաղաքացի լինելը միայն չափահասների համար չէ. երեխաները և երիտասարդները հավասարապես հասարակության անդամներ են:

Մեդիայի միջոցով երեխաները տեղեկություն են ստանում աշխարհի և իրենց շրջապատի վերաբերյալ և կարող են իրենց դիտարկումներն անել առօրյայի և տեղի ունեցող իրադարձությունների շուրջ: Մեդիայի միջոցով երեխաները կարող են արտահայտել իրենց մտքերը և շփվել մյուսների հետ:

Մեծահասակները ապահովում են երեխաների ներգրավվածությունը

Մեդիայի օգնությամբ երեխաները և երիտասարդները ավելի հեշտ են իրենց ձայնը լսելի դարձնում հասարակությունում, քան նախկինում:

Մեծահասակները մեդիայում պետք է գտնեն զվարճալի և հետաքրքիր որևէ բան երեխաների համար և նրանց ուղղորդեն մեդիայի ընտրության հարցում, որպեսզի նպաստեն նրանց ներգրավվածությանը, մասնակցությանը և փոփոխություն բերելու հնարավորությանը:

Մեծահասակները մեդիայում պետք է գտնեն զվարճալի և հետաքրքիր որևէ բան երեխաների համար և նրանց ուղղորդեն մեդիայի ընտրության հարցում, որպեսզի նպաստեն նրանց ներգրավվածությանը, մասնակցությանը և փոփոխություն բերելու հնարավորությանը:

Հասարակության մեջ ներգրավվածությունը և մասնակցությունը, ինչպես նաև հասարակության վրա ազդելու ցանկությունը հիմնված են լավ ինքնագնահատականի և սեփական կարծիքի կարևորությունը ըմբռնելու վրա: Ուստի հետաքրքրվե՛ք ձեր երեխայի գաղափարներով, հարցրե՛ք նրանց կարծիքը և խրախուսեք նրանց տեղեկանալու ցանկությունը:

Ինչպե՞ս անցավ օրդ

Երեխաները խորհրդատվության և աջակցության կարիք ունեն, թե ինչպես վարվել մեդիայի հետ, ինչպես կյանքի ցանկացած այլ նոր հմտությունների դեպքում: Երբ ձեր երեխան ստանում է իր առաջին հեռախոսը կամ այլ կերպ սկսում է ինքնուրույն օգտագործել մեդիա, ժամանակն է ներկայացնել նրան մեդիայից օգտվելու հիմնական կանոնները:

Մեծահասակները օրինակ են ծառայում՝ ինչպես օգտվել մեդիայից

Երեխաների համար մեդիաօգտագործման լավ օրինակ է, երբ մեծահասակները հարգում են մեդիայի այլ օգտատերերին և պահպանում են գործող օրենսդրությունը և կայքի կանոնները: Մեդիայի ողջամիտ օգտագործման լավ օրինակ ծառայելը նույնպես կարևոր է: Երեխաները ընտանիքի ուշադրության կարիքն ունեն:

Երեխաները հնարավոր է տխրում են, երբ մեծահասակները շատ ժամանակ են հատկացնում մեդիային: Այսօր երեխաների լավ վարվելակերպ սովորեցնելու և նրանց դաստիարակության մաս է մեդիայի օգտագործման ժամանակի և վայրի ընտրությունը: Մեդիայի օգտագործման և այլ գործողությունների միջև հավասարակշռությունը հավասարապես կարևոր է երեխաների և մեծահասակների համար:

Մեդիայի օգտագործման և այլ գործողությունների միջև հավասարակշռությունը հավասարապես կարևոր է երեխաների և մեծահասակների համար:

ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԱՌԱՁ ՔԱՇՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Ինչպե՞ս վարվել

Թյուրըմբռնումները քիչ հավանական են դեմ առ դեմ հաղորդակցության ժամանակ՝ ի տարբերություն գրավոր հաղորդակցության, որոնցում դեմքի արտահայտություններն ու ժեստերը չեն երևում: Եթե ինչ-որ մեկին վիրավորել եք, ներողություն խնդրեք: Եթե ընկերոջդ հաղորդագրությունից քեզ վատ ես զգում, ասա՛ նրան:

Գաղտնաբառերը գաղտնի են: Մի՛ տրամադրեք ձեր հեռախոսի PIN ծածկագիրը կամ վեբ ծառայության գաղտնաբառերը այլ մարդկանց և մի՛ փորձեք ձեռք բերել այլոց գաղտնաբառերը:

Ոչ բոլորն են ծիծաղում նույն բաների վրա: Մի՛ տարածեք տհաճ կամ վախեցնող հղումներ և պատկերներ, քանի դեռ համոզված չեք, թե ինչպես կարձագանքեն մյուսները: Երեխաների համար արգելված պատկերներն ընդհանրապես չպետք է տարածվեն: Ոչ ոքի մի՛ ավելացրեք արագ նամակագրության խմբերում կամ քննարկման ֆորումներում առանց նախապես թույլտվություն հարցնելու:

Եթե որևէ մեկը ահաբեկում կամ անհանգստացնում է ձեզ առցանց կամ հեռախոսով, պետք է տեղեկացնեք մեծահասակներին: Ծառայություններից մեծամասնության կարգավորումներում հնարավոր է արգելափակել անցանկալի հաղորդագրությունները: Ավելին՝ շատ ծառայություններ ունեն կարգավորող, որին կարող եք տեղեկացնել դրանց մասին:

Մեդիայի օգտագործման համար կան ժամանակ և տեղ: Երբ պետք է օգտագործեք մեդիան, և երբ ոչ: Ո՞ր դեպքերում պետք է անջատեք ձեր սարքերը կամ դրանք անձայն ռեժիմի վրա դնեք:

Երբեք մի՛ ահաբեկեք մյուսներին: Առանց թույլտվության նկարելը, ուրիշների մասին բամբասանքներ տարածելը, դասընկերոջը արագ նամակագրության խմբից հանելը ահաբեկման ձևեր են:

Գիշերը հեռախոսները ճիշտ կլինի լուռ ռեժիմի վրա դնել: Մի՛ խանգարեք ձեր ընկերների քունը հաղորդագրություններով: Եթե ձեր հեռախոսը կամ այլ սարք ակտիվ է, ապա այն ննջասենյակից հանե՛ք:

Եթե որևէ մեկը, որի հետ միայն առցանց եք շփվել, ցանկանում է դեմ առ դեմ հանդիպել ձեզ հատ, տեղյա՛կ պահեք ձեր ծնողներին կամ խնամակալին: Միասին կորոշեք՝ արդյոք արժե հանդիպել: Մեծահասակը պետք է ուղեկցի ձեզ առնվազն առաջին հանդիպման ժամանակ:

Սոցիալական մեդիան միավորում է մարդկանց

Այսօր դպրոցական տարիքի գրեթե բոլոր երեխաները օգտվում են տարբեր սոցիալական ցանցերի ծառայություններից և բջջային հավելվածներից: Սոցիալական ցանցերի ծառայությունները համացանցի միջոցով են տրամադրվում, ինչը նշանակում է, որ դրանցից հնարավոր է օգտվել տարբեր սարքերով, ինչպիսիք են՝ համակարգիչները, դյուրակիր համակարգիչները, պլանշետները և սմարթֆոնները: Սոցիալական մեդիայով կարող եք տարածել տեքստեր, պատկերներ, տեսա- և լսանյութեր: Հատկապես տարածված են ծանոթներին արագ հաղորդագրություններ ուղարկելու հավելվածները, ինչպես նաև տեսա ծառայությունները, որոնք հնարավորություն են ընձեռում տեսանյութերը առցանց դիտելու և դրանց վերաբերյալ մեկնաբանություններ թողնելու:

Կարիք չկա օգտվել այն բոլոր սոցիալական մեդիակայքերից, որոնցով ձեր երեխաները հետաքրքրված են, բայց կարևոր է իմանալ՝ ինչ ծառայություններից են նրանք օգտվում:



Կարիք չկա օգտվել այն բոլոր սոցիալական մեդիակայքերից, որոնցով ձեր երեխաները հետաքրքրված են, բայց կարևոր է իմանալ՝ ինչ ծառայություններից են նրանք օգտվում: Այդպես կարող եք սովորեցնել երեխային, թե ինչպես վարվել այս ծառայությունների հետ և հաշվի նստել ծառայությունների այլ օգտատերերի հետ: Սոցիալական մեդիայի որոշ ծառայություններ հիմնականում օգտագործվում են ընկերների հետ, մինչդեռ մյուսներում հաղորդագրությունները հանրային են, և լսարանը կարող է ներառել յուրաքանչյուրին: Փոխհարաբերությունների նոր եղանակները պահանջում են մարդկային հարաբերությունների նոր հմտություններ: Կարևոր է, որ երեխաները տեղյակ լինեն իրենց հաղորդագրությունների թիրախային խմբերի և դրանց ընդգրկվածության մասին:

ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԱՌԱՋ ՔԱՇՎՈՂ ՀԱՐՑԵՐ

- Սոցիալական մեդիայի ի՞նչ տարբեր ծառայություններ գիտեք: Ի՞նչ նպատակով են դրանք օգտագործվում, և ինչո՞վ են տարբերվում միմյանցից:
- Ի՞նչ պետք է անել, երբ ցանկանում եք օգտագործել նոր առցանց ծառայություն կամ ծրագիր:
- Ո՞ւմ պետք է ընդունեք որպես ընկեր:
- Ինպիսի՞չ բովանդակություն կարող եք կամ պետք է տարածել սոցիալական մեդիայով:
- Ինչպիսի՞ բովանդակություն չպետք է տարածեք: Ինչպիսի՞ բովանդակություն է արգելվում տարածել:

Ի՞նչ է քննադատական մեդիագրագիտությունը

Քննադատական մեդիագրագիտությունը ոչ թե հակադրվում, այլ, ավելի շուտ՝ հետաքրքրական, հետազոտական և հարցական մոտեցում է ցուցաբերում մեդիային: Երեխաները կարող են դա սկսել շատ վաղ տարիքից՝ ուսումնասիրելով մեդիայի բովանդակությունը ուրիշների հետ խորհելով մեդիայի ճշմարտացիության և դրա տեղեկատվական աղբյուրի մասին: Սրանք կարևոր խնդիրներ են, որոնք պետք է դիտարկվեն ամբողջ ընտանիքի համար, քանի որ մեդիան նաև առաջարկում է բազմաթիվ տեղեկություններ, մեծ մասը՝ կողմնակալ կամ կեղծ: Երբ մենք ավելի լավ ենք ընկալում մեդիան, կարող ենք այն ավելի լավ օգտագործել և բավականություն ստանալ:

Քննադատական մեդիագրագիտությունը ոչ թե հակադրվում, այլ, ավելի շուտ՝ հետաքրքրական, հետազոտական և հարցական մոտեցում է ցուցաբերում մեդիային:

ԱՐԴՅՈ՞Ք ԳԻՏԵԻՔ

Գովազդները պետք է ճանաչելի լինեն որպես այդպիսին: Ֆինլանդիայում եթե հեռուստատեսային ծրագիրը հովանավորվում է կամ պարունակում է վճարովի ապրանքի գովազդ, դրա մասին պետք է նշվի: Ապրանքանիշը ենթադրում է արտադրանքի ներկայացում հեռուստաշոուում:

Առևտրայնությունն ու գովազդը քննադատական գնահատման համար կարևոր սուբյեկտներ են: Այսօր ավելի ու ավելի շատ գովազդներ ուղղված են երեխաներին, և երեխաները մասնակցում են ընտանիքի սպառողական ընտրություններին: Գովազդները գայթակղիչ են, և երեխաները նոր են սկսում հասկանալ փողի արժեքը: Շատ թվային խաղեր ներառում են այն իրերը գնելու հնարավորությունը, որոնք հեշտացնում են խաղի մեջ հաջողության հասնելը: Կարևոր է ընտանիքի հետ խոսել գովազդի և փողի մասին:

ԱՐԴՅՈ՞Ք ԳԻՏԵԻՔ

Ձեր երեխան պատահաբար առցանց գնումներ կատարե՞լ է: Երեխաներին ուղղված գովազդն անպատե՞հ է:
Կարդալ ավելին «Երեխաները որպես սպառող» կայքից, որը պատրաստվել է Ֆինլանդիայի մրցույթի և սպառողների մարմնի կողմից:

ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԱՌԱՁ ՔԱՇՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Փա՞ստ, թե՞ հորինվածք: Մեդիա օգտագործելիս պետք է հաշվի առնել՝ ինչն է մեդիա բովանդակության մեջ ճիշտ, և ինչը՝ սխալ: Երեխաների համար գուցե ավելի հեշտ է հասկանալ, որ անիմացիոն (շարժապատկերային) ծրագրերը, օրինակ, հորինվածք են, բայց ավելի բարդ է, եթե ծրագիրը նման է «իրական կյանքի»:

Ի՞նչ է մեդիան փորձում հայտնել: Մեդիաբովանդակությունը միշտ հեղինակների ընտրության արդյունքն է: Նպատակը կարող է լինել տեղեկություն փոխանցելը, մարդկանց ծիծաղեցնելը կամ նրանց համոզելը գնել տարբեր ապրանքներ: Կարող եք սովորեցնել ձեր երեխային ճանաչել մեդիայի տարբեր ձևերը:

Ձեր երեխան գիտի՞, որ որոշ կայքերում, խաղերում կամ ծառայություններում իրական փող է օգտագործվում: Ինչպիսի՞ կանոններով եք առաջնորդվում ձեր ընտանիքում գումարը առցանց և խաղերում օգտագործելու վերաբերյալ:

Կարո՞ղ եք վստահել դրան: Աղբյուրի քննադատություն կա տեղեկության հուսալիության գնահատում կարելի է կիրառել հետևյալ հարցերը տալով՝ սա փա՞ստ է, թե՞ որևէ մեկի կարծիք: Այս տեղեկությունը հնարավո՞ր է գտնել այլ աղբյուրներից: Տեղեկությունը արդիակա՞ն է, թե՞ ավելի թարմ տեղեկություններ կան:

Ձեր երեխան ճանաչո՞ւմ է գովազդը փողոցում, կայքում, թերթում, ամսագրում կամ հեռուստատեսությունում:

Գովազդի նպատակը արտադրանքը գրավիչ դարձնելն է: Ի՞նչ տարբերություն ինչ-որ բան ցանկանալու և կարիքի միջև: Հնարավո՞ր է ձեռք բերել այն ամենը, ինչ ցանկանում եք:

Միասին ուսումնասիրե՛ք նորությունների լուսանկարներ և այլ պատկերներ: Ի՞նչ է ցուցադրում պատկերը: Ի՞նչը կարող էր դուրս մնացած լինել շրջանակից: Լուսանկարները միշտ վստահելի՞ են: Պատկերներից մի քանիսը որոշակիորեն խմբագրվա՞ծ են:

Գաղտնիություն և տեղեկատվության անվտանգություն

Առցանց ծառայությունները, օրինակ, սոցիալական ցանցերի պրոֆիլներից իրենց օգտատերերի մասին տվյալներ են հավաքում: Օգտատերերը իրենք են շատ տեղեկություններ տրամադրում՝ մասնակցելով տարբեր թեստերի կամ մրցույթների: Այս տեղեկություններն օգտագործվում են ավելի թիրախային գովազդ իրականացնելու կամ օգտագործողի փորձը բարելավելու համար:

Հոգ տարեք ձեր տեղեկությունների մասին

Սխալ օգտագործման ռիսկը մեծանում է սոցիալական մեդիա ծառայություններում անձնական տեղեկության հրապարակման, ինչպես նաև տարբեր առցանց բազաներում անձնական տվյալների պահման միջոցով: Անձնական տվյալների գողությունը՝ որպես խաբեության ձև, վերջին տարիներին ավելի ու ավելի է տարածվել: Անձնական տվյալներ գողացող անձինք ներկայանում են այլ անունով սոցիալական ցանցերում կամ առցանց գնումների կայքերում:

Ձեր անձնական տվյալների անվտանգության ապահովումը շատ կարևոր է: Երբ իմանաք ռիսկերի մասին, ավելի հեշտ կլինի ինքնապաշտպանվել:

Ձեր երեխայի հետ ծանոթացե՛ք առցանց ծառայությունների գաղտնիության կարգավորումներին և ստուգեք, թե որ անձնական տեղեկությունները կարելի է թույլ տալ, որ ծառայությունները հրապարակեն:

Ձեր երեխայի հետ ծանոթացե՛ք առցանց ծառայությունների գաղտնիության կարգավորումներին:

ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԱՌԱՁ ՔԱՇՎՈՂ ՀԱՐՑԵՐ

- Եթե ձեր երեխան առցանց ծառայության պրոֆիլ ունի.
  Ի՞նչ տեղեկություն է ցուցադրվում հրապարակավ: Ի՞նչ է ցուցադրվում ընկերներին: Հանրության համար հասանելի տեղեկությունը նվազագույնի՛ հասցրեք:

- Ինչպիսի՞ տեղեկություններ են ձեր օգտագործած հավելվածներն ու սոցիալական մեդիածառայությունները հավաքում օգտատերերից: Հնարավո՞ր է արդյոք փոխել դրանք՝ կարգավորումների միջոցով:

- Արդյո՞ք ընտանիքի անդամի վճարման քարտը կցված է ձեր երեխայի կողմից օգտագործվող սարքին կամ օգտատիրոջ հաշվին: Եթե այո, ստուգելով սարքի կամ օգտատիրոջ հաշվի կարգավորումները, համոզվե՛ք, որ երեխան չի կարող առցանց գնումներ կատարել առանց pin ծածկագրի:

Սույն ուսումնամեթոդական ձեռնարկը թարգմանվել է
Հանրային լրագրության ակումբի «Ավելի անվտանգ առցանց միջավայր.
նախադպրոցական հաստատություններում մեդիագրագիտության ուղղությամբ
միջամտություն» ծրագրի շրջանակներում,
որը ֆինանսավորվել է ԱՄՆ պետքարտուղարության
Հասարակայնության հետ կապերի գրասենյակի
դրամաշնորհի շրջանակներում:

Այս ուսումնամեթոդական ձեռնարկը տարածելիս
Հանրային լրագրության ակումբին հղում կատարելը պարտադիր է:

ՀԼԱ կոնտակտային տվյալներ՝

Կայք՝ https://pjc.am/
Էլ. հասցե՝ info@pjc.am
Հեռ.՝ +37412 755898, +37499 755 89